

ՊԱՏԿԵՐԱՄԱՐՏՈՒԹԻՒՆ

Է. և Ը. դարերուն, Քրիստոնէական — և ի մասնաւորի Բիզանդական — Եկեղեցին յազոզ ամենէն կնճառաւ հարցերէն մին եղած է պատկերամարտութիւնը: Ազանդամիտներ, Ս. Գրքի ոգիէն աւելի տառին կառչելու սխալ սկզբունքէն առաջնորդուած, ոչ միայն աւելորդ անպատշաճ՝ այլև մեղք կը համարէին սրբապատկերներու և Տնօրինական զէպքերը ներկայացնող նկարներու գոյութիւնը եկեղեցիներու մէջ:

Երբ հոգեւորականներու շարքերէն ներս ևս սկսան ծաւալիլ մոլորանքի այս սերմերը, հարցը միանգամընդմիջաւ լուծելու համար 787ին զումարուեցաւ կոստանդնուպոլսոյ Բ. ժողովը, ուր խստօրէն դատաւարաւեցան ազանդամիտները: Պատկերամարտներու զէմ տարուած այս յաղթանակը մինչև օրս կը նշուի Բիզանդածէս (Յոյն, Սրբաստօքս և կաթողիկ) Եկեղեցւոյ մէջ Մեծ Պահօց մէջ ինկող առաջին կիրակիին, երբ հանդիսանոր Ս. Պատարագէ ետք, սրբանկարներ ի ձեռքն կը կատարեն մեծահանգէս թափօր:

Հոգմէական Եկեղեցւոյ մօտ, Միջին դարերէն սկսեալ զարգացած է նաև եկեղեցիներու մէջ սուրբերու արձաններ ունենալու սովորութիւնը, որոնք տպաւորիչ վեհութիւն մը տալու կոչուած են ազօթավայրին՝ սրբանկարներու կողքին: Աւելի տպաւորիչ են Քրիստոսի մանաւանդ Անոր շարշարանքներէն խօսող — ու Ս. Աստուածածնայ արձանները:

Վերջին շրջանին, Լատին Եկեղեցին առհասարակած է սրբանկարներու թիւը իր տաճարներուն մէջ: Հայոց Եկեղեցին ալ սկիզբէն չափաւոր ու ժամկետ եղած է այս տեսակէտէն: Բացառութիւն կը կազմէ Երուսաղէմը, ուր զօրաւոր եղած է Բիզանդական ազդեցութիւնը ինչպէս նաև մրցակցութեան ոգին: Իսկ Յունադաւաններու մօտ սրբապատկերները կը շարունակեն զբաւել Եկեղեցւոյ որմերը, երբեմն ձեռքունէն մինչև օտաւատաղ:

Աւելորդ է խօսիլ սրբանկարներու

զերի մասին: Մեղք մերկ պատերով տաճարէ մը և վայելուչ ու ճաշակաւոր նկարներով պնդազարդուած տաճարէ մը ներս, ու ըրէք բազդատութիւնը: Ո՞րն է որ պիտի բարձրացնէ ֆերմաշափը ձեր հոգեւոր ապրումներուն, Մերկ ու յօրանջող որմեր ցրտութեան ալիքով կը պատեն մեր սրտերը:

Մեր օրերու պատկերամարտները, իրենց խարխուլ տեսակէտը հիմնելով Ելից զրքի Ի. գլխուն 4րդ համարին վրայ — «Ի՛նչ արապես դու քեզ կուռս» — յոյն մոլորութեան մէջ են: Անոնք վարպետօրէն կ'անջատեն յիշեալ համարը յաջորդէն, ուր Տէրը կ'արգիլէ երկրպագութիւն ընել անոնց կամ պաշտել զանոնք: Ուրեմն ոչ թէ կուռք (բոս իրենց՝ սրբանկար) շինելը՝ այլ պաշտելն է խոտելի: Ու ո՞վ չի գիտեր թէ մենք ոչ թէ նկարը՝ այլ անոր ետին կեցող, այսինքն անով ներկայացուածն է (Քրիստոս, Տիրամայր և կամ սուրբ) կը պաշտենք կամ կը մեծարենք:

Հին Ուխտի մէջ ներկայացուած են զէպքեր, ուր Տէրը ինքն իսկ կը հրահանգէ կուռքերու — օձակերպ կամ սրով-բէական — շինութիւնը: Կ'ականարկենք Սինայի անապատին մէջ Մովսէսի տուած հրահանգին պղինձէ օձ մը շինելու և Տաճարի շինութեան տանն Ուխտի Տապանակը հրեշտակակերպ զարդերով օժտելու Սողոմոնի տուած հրահանգին:

Եոյն այս ազմամպարութեան է որ կը գիմեն նորադանդները ուրիշ առիթներով ևս: Այսպէս, Կ'առնեն Ս. Գրքի որոշ գլուխէ մը համար մը կամ անոր կէտը, Կ'անջատեն զայն նախորդ և յաջորդ համարներէն, կը կտրեն շարաշարութիւնը զաղափարներուն և մասձուլեութեան, և կ'զրոյցուած համարին կու տան ինքնաբոյն և այլանդակ մեկնութիւն մը: Եթէ ուզենք մատնանշել օրինակներ այս ուղղութեամբ, մենք մեզ պիտի գտնենք նոր յօդուածի մը մուտքին, որուն տեղը չէ հոս և որուն անդրադառնալու առիթը կ'ունենանք յառաջիկային այս էջերէն:

ԳԵՐՈՒՄ Ս. ՃԻՆԻՎԻԶԵԱՆ